I. ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ 2023թ.-ԻՆ

Տվյալները վերցված են «ՀՀ աշխատաշուկա 2023: Ամբողջական զեկույց» -ից (կայք՝ https://staff.am/staffmedia/labor-market-2023/) և «Հայաստանյան աշխատաշուկան 2023թ.-ին. job.am-ի հետազոտության արդյունքները» (կայք՝ https://job.am/ru/blog/901/hayastanyan-ashxatashukan-2023-in-job-am-i-hetazotutyan-ardyunqnere):

1. 2023 թ. ամենապահանջված 20 մասնագիտական ոլորտները և դրանց համեմատությունը 2022թ. տվյալների հետ

2023թ. նախորդող 6 տարիների ընթացքում ամենամեծ պահանջարկն ունեցող Ծրագրավորման մասնագետների համար հայտարարված թափուր հաստիքների թիվը 2023թ. կրճատվել է մոտ 50%-ով: Ընդորում, ակտիվության անկում դիտվել է ոչ միայն ՏՏ ընկերություններում, այլ նաև այլ ոլորտներում, օրինակ, ֆինանսաբանկային և հեռահաղորդակցության[1]: Սա պայմանավորված է տվյալ ոլորտներում ՏՏ մասնագետների ցածր հոսունությամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններում տեղի ունեցած կրճատումներով, հավաքագրման սառեցմամբ և զարգացման ու ընդլայնման ավելի դանդաղ տեմպերով:

Ըստ staff.am-ի 2023թ.-ի ամենապահանջված 20 մասնագիտություններն են.

1. Բանկային/վարկային մասնագետ,
2. Վաճառքի/սպասարկման կազմակերպում,
3. Ծրագրավորում
4. Մարքեթինգ/Գովազդ,
5. Ադմինիստրատիվ/օֆիսային աշխատանք,
6. Հաշվապահություն/Հաշվետարություն/Դրամարկղ,
7. Այլ ՏՏ ոլորտներ,
8. Պրոդուկտի/նախագծերի կառավարում,
9. Կրթություն,
10. Ֆինանսների կառավարում,
11. Տուրիզմ/Հյուրընկալություն/HoReCa,
12. Գնումներ/Լոգիստիկա/Սուրհանդակային աշխատանք,
13. Մարդկային ռեսուրսների կառավարում,
14. Իրավական,
15. Բիզնես/Կառավարում,
16. Ընդհանուր/Մասնագիտական/այլ ծառայություններ,
17. Տվյալների վերլուծություն,
18. Որակի կառավարում,
19. UI/UX/Գրաֆիկ դիզայն,
20. Արտադրություն:

---

[1] https://staff.am/am/jobs/categories/index?JobsFilter%5Bkey_word%5D=&JobsFilter%5Bcategory%5D%5B0%5D=11#search_list_block



Ինչպես ցույց են տալիս ներկայացված տվյալները (դիագրամում), ապա 2023թ. ամենապահանջված մասնագիտություններում 2022թ. համեմատ անկում է գրանցել միայն Ծրագրավորման և SS ոլորտի այլ մասնագիտությունների մասով պահանջարկը: Այլ ոլորտներում պահանջարկն աճել է կամ մնացել է նույնը: Հարկ է նշել նաև, որ **Հաշվապահական** ոլորտի մասնագետների սղությունն ամբողջ տարվա ընթացքում զգալի է եղել, իսկ շուկայում այդ մասնագետների պակասն ակնհայտ է:

Ներկայացնենք ամենաբարձր պահանջարկ ունեցող **<u>մասնագիտությունները ՀՀ մարզերում</u>**:



Հաշվի առնելով, որ ամենամեծ մասնաճյուղերի ցանցը մարզերում ունեն բանկերն ու վարկային կազմակերպությունները, ամենամեծ պահանջարկ ունեն հենց **<u>Բանկային և Վարկային մասնագետները</u>**: **<u>Վաճառքի և սպասարկման մասնագետների</u>** մեծ պահանջարկը մարզերում

զարմանալի չէ և պայմանավորված է ինչպես մարզերում մասնաճյուղ ունեցող գործատուներով, այնպես էլ մարզային ընկերությունների հաստիքներով: Արտադրության, հաշվապահության, ադմինիստրատիվ և որակի կառավարման մասնագետների պահանջարկը հիմնականում մարզերում գտնվող ընկերությունների կողմից են:

2. 2021-2023թթ. համեմատական վերլուծություն՝ ըստ 20 ամենաակտիվ ոլորտների (գործատուների)

Հայտարարված բոլոր թափուր աշխատանքների[2] մոտ 30%-ը բաժին է ընկնում SS ոլորտի ընկերություններին՝ համեմատած 2022թ. 42% և 2021թ. 50%-ի հետ: Սա պայմանավորված է SS ոլորտի ակտիվության անկման հետ, ինչն էլ իր հերթին երկու պատճառ ունի՝ միջազգային SS ոլորտի ճգնաժամն ու ներդրողների ավելի զգույշ ու պահպանողական լինելը և ԱՄՆ դոլարի արժեզրկումը ազգային արժույթի նկատմամբ: Պատմականորեն ամենաակտիվ SS ոլորտը 2023թ. դեռ շարունակեց պահպանել առաջատարի իր դիրքը:

Ֆինանսաբանկային ոլորտի ընկերությունների ցուցաբերած ակտիվությունը 2023թ. կազմել է 27%, ինչը 7 տոկոսային կետով ավելի բարձր է 2022թ. համեմատ և կրկնակի՝ 2021թ. նկատմամբ: Այս աճով պայմանավորված SS ոլորտի և ֆինանսաբանկային ոլորտի ակտիվության տարբերությունը բավականին կրճատվել է:

Գրաֆիկում ներկայացված են գործատուների այն ոլորտները, որտեղ գրանցվել է ամենամեծ ակտիվությունը: Բացի նշված ամենաակտիվ երկու ոլորտների աճ են գրանցել նաև հետևյալ ոլորտները.

1. Ներկրում/Արտահանում/Առևտուր,
2. Արդյունաբերություն/Արտադրություն,
3. Կրթություն,
4. Հեռահաղորդակցություն,

[2] https://staff.am/am/jobs

5. Տուրիզմ/Հյուրընկալություն/Ժամանց,
6. Ծառայություններ,
7. Մանրածախ բիզնես,
8. Դիզայն/Ճարտարապետություն,
9. ՄՌԿ/Խորհրդատվություն/Իրավական,
10. ՀԿ/Միջազգային կազմակերպություն,
11. Սպորտ/Խաղադրույքներ,
12. Առողջապահություն/Դեղագործություն,
13. Մարքեթինգ/Գովազդ:

3. ՀՀ ամենաակտիվ գործատուներն՝ ըստ համալրման ծավալների

Համալրման ծավալներով ՀՀ ամենաակտիվ 20 գործատուների ցանկում 2022թ.-ին եղել են SS ոլորտի 9 ներկայացուցիչներ, 2021թ.-ին՝ 11-ը, իսկ ահա 2023թ. SS ընկերությունները դիրքերը զիջել են և ընդամենը 6 SS ընկերություն կա թոփ 20-ում:

Ֆինանսաբանկային ոլորտում 2022թ.-ից սկսած և 2023թ.-ին ՀՀ բանկերում գրանցվել է ակտիվության աճ: Փաստացի բոլոր աշխատանքների ավելի քան 26%-ը հայտարարվել է ֆինանսաբանկային ոլորտի ընկերությունների կողմից, իսկ դա բավականին լուրջ մասնաբաժին է:



Ներկայացված գրաֆիկում ամենակատիվ գործատուների շարքում կա 7 բանկ և 1 վարկային կազմակերպություն:

Գործատուներից ՀՀ մարզային քաղաքներում 2023թ.-ին համալրմամբ ակտիվություն են ցուցաբերել այն ընկերությունները, որոնք ունեն մասնաճյուղեր տվյալ քաղաքում: Օրինակ, 20 ամենաակտիվ գործատուներից 8-ը ֆինանսաբանկային ոլորտից են, որոնք հավաքագրում են կատարում մարզային մասնաճյուղերի համար: 2-ը SS ոլորտից են (համեմատած նախորդ տարվա 4-ի հետ): Հաշվի առնելով Հեռահաղորդակցության ոլորտի ցուցաբերած ակտիվությունը 2023թ.՝ ոլորտի երեք խոշոր ընկերություն նույնպես ընդգրկվել են ամենաակտիվ քսանյակում:

4. 20 ամենապահանջված սոֆթ (փափուկ) հմտությունները

Soft (փափուկ) հմտություններն անձնային հմտություններն են, որոնք անհրաժեշտ են մասնագիտական հմտությունների հետ միասին աշխատանքը լավ կատարելու համար:

«ՀՀ աշխատաշուկա 2023: Ամբողջական զեկույց» -ում ներկայացվել են գործատուների կողմից ամենապահանջված 20 սոֆթ հմտությունները և դրանց համեմատությունը 2022թ. ամենապահանջված հմտությունների հետ:



Ոլորտային ակտիվությամբ պայմանավորված՝ տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ սոֆթ հմտությունների պահանջարկի մասով: Առաջին տեղում է «Ժամանակի կառավարումը», որն առաջ է անցել ավանդաբար ամենապահանջված «Թիմում աշխատելու ունակությունից»:

Թոփ քսանյակի մեջ ընդգրկվել և պահանջվածության աճ են գրանցել այնպիսի հմտություններն, ինչպիսիք են «Պատասխանատվության զգացումը», «Սթրեսակայունությունը», «Արագ սովորելու կարողությունը», «Պարտաճանաչությունը», «Առաջնորդության հմտությունները», «Առաջնահերթությունները որոշելու կարողությունները», «Բազմաբնույթ առաջադրանքներ կատարելու կարողությունները»:

5. **Աշխատանքների բաշխվածությունն՝ ըստ զբաղվածության տեսակի**

2023թ. staff.am-ում շարունակել է գերակշռել մշտական աշխատանքը (87.9%), սակայն եղել են որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, աճի միտում կա ֆրիլանս աշխատանքի նկատմամբ: 2022թ. այն կազմել է բոլոր աշխատանքների ընդամենը 0.2%-ը, մինչդեռ 2023թ. այն կազմել է 1.1%: Ֆրիլանս տիպի հաստիքները հիմնականում հետևյալ մասնագիտությունների համար են՝ մարքեթինգ, գրաֆիկ դիզայն, UI/UX, ծրագրավորում:



6. Միջին անվանական աշխատավարձի բաշխվածությունն՝ ըստ Երևանի և ՀՀ մարզերի

Ուսումնասիրությունը հիմնված է ՀՀ վիճակագրական կոմիտեի ուսումնասիրության վրա և նպատակ ունի համեմատելու, թե ինչպիսի միջին աշխատավարձեր են առաջարկվում Երևանում և ՀՀ մարզերում: Ըստ գրաֆիկի՝ ք.Երևանում և Սյունիքում միջին ամսական աշխատավարձի մակարդակները բավականին մոտ են: Սա հիմնականում պայմանավորված է մարզում հանքարդյունաբերության խոշոր գործատուների առկայությամբ: Ամենացածր աշխատավարձերը վճարվում են Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:



7. Միջին ամսական աշխատավարձի դինամիկան 2017-2023թթ.-ին

Գրաֆիկում ներկայացված է 2017-2023թթ. միջին ամսական աշխատավարձի աճի դինամիկան: Ըստ ուսումնասիրության՝ 2021թ.-ից դիտվում է աշխատավարձերի կայուն աճ, ինչը գրանցվել է նաև 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսների համար նույնպես:

II. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

1. SS ոլորտը մեկ ակնթարթում.

- Միջին աշխատավարձը (հարկերը ներառյալ)՝ **1,150,000 ՀՀԴ**, որը ամենաբարձրն է Հայաստանում:
- staff.am-ում առաջատար ոլորտն է, բոլոր աշխատանքների մոտ 30%-ը բաժին է ընկնում SS-ին:
- Ոլորտում աշխատող մասնագետների թվաքանակը՝ մոտ 32,000:
- Ոլորտի ամենաակտիվ և ամենախոշոր գործատուները՝ Digitain և SoftConstruct:
- Ամենապահանջված մասնագիտությունը՝ Ծրագրավորում:
- Ամենահաճախ հանդիպող տեխնոլոգիան աշխատանքի հաստիքներում՝ JavaScript/JS Frameworks:
- Ամենապահանջված սոֆթ հմտությունը՝ «Թիմային աշխատանքը»:

2. Ամենաակտիվ SS գործատուները ՀՀ-ում

Չնայած ակտիվության զգալի նվազման՝ SS ոլորտը շարունակում է մնալ ամենաակտիվը ՀՀ աշխատաշուկայում՝ ըստ staff.am-ի տվյալների:

Գրաֆիկում ներկայացված են SS ոլորտի ամենամեծ ծավալներով համալրում կատարած ընկերությունների անվանումները: Հարկ է նշել, որ SS ընկերությունների ուսումնասիրության մեջ ներառված են ինչպես SS մասնագետների (ծրագրավորում, SS որակի կառավարում, տվյալագիտություն, պրոդուկտի և SS նախագծերի կառավարում և այլն), այնպես էլ այլ մասնագիտությունների մասին տվյալները: Ամենաակտիվ SS գործատուներից երեքը զբաղվում են խաղային լուծումների մշակմամբ, իսկ չորսը հանդիսանում են միջազգային ընկերությունների ներկայացուցչություն ՀՀ-ում:



3. ՏՏ ընկերությունների կողմից ամենապահանջված մասնագիտությունները

Ըստ 2023 թ.-ին հայտարարված թափուր հաստիքների թվի «Ծրագրավորում» մասնագիտությամբ աշխատանքները[3] մեծ տարբերությամբ առաջատար են (>20%-ից): Ծրագրավորման մասնագետներին հաջորդում է «Վաճառքի և սպասարկման կազմակերպում» մասնագիտությունը, այնուհետև «Մարքեթինգ/գովազդ», «Պրոդուկտի/նախագծերի կառավարում» մասնագիտություն-ները, իսկ թռփ հնգյակը եզրափակվում է «Այլ ՏՏ» մասնագիտությամբ:



4. Ամենապահանջված տեխնոլոգիաները ՏՏ ոլորտում

Վերլուծության և գրաֆիկի նպատակն է բացահայտել, թե որոնք են եղել ՏՏ ոլորտի մասնագետներ հավաքագրելիս ամենապահանջված տեխնոլոգիաները:



3 https://staff.am/am/jobs?JobsFilter%5Bcompany%5D=&JobsFilter%5Bkey_word%5D=&JobsFilter%5Bjob_candidate_level%5D=&JobsFilter%5Bcategory%5D=&JobsFilter%5Bcategory%5D%5B%5D=1&JobsFilter%5Bjob_type%5D=&JobsFilter%5Bsalary%5D=&JobsFilter%5Bjob_term%5D=&JobsFilter%5Bjob_city%5D=&JobsFilter%5Bsort_by%5D=0&&JobsFilter%5Bsort_by%5D=0

Այստեղ ներառվել են բոլոր ոլորտներից SS մասնագետների հաստիքների տվյալները: Այս տարի ամենամեծ պահանջարկը գրանցել են JavaScript-ի և JS-ի framework-ները: Թոփ եռյակում հայտնվել է նաև Python-ը: Թոփ տասնյակը եզրափակում է Selenium-ը:

Նշենք որ 2022թ.-ին առաջին հորիզոնականը զբաղեցնող .Net/ASP.Net/C# տեխնոլոգիան այս տարի զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը:

5. Ամենապահանջված մասնագիտությունները ֆինանսաբանկային ոլորտում

Միջին աշխատավարձը Ֆինանսաբանկային ոլորտում՝ 809.000 ՀՀ դրամ:

Ֆինանսաբանկային ոլորտի ամենաակտիվ գործատուներն են. Արդշինբանկ, «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ, Ֆաստ Բանկ, ՎՏԲ Հայաստան բանկ, ԱյԴի բանկ, Ամերիաբանկ:



Ֆինանսաբանկային ոլորտում ամենապահանջված մասնագիտական գիտելիքների առաջին եռյակում առաջատարն է MS Office փաթեթի իմացությունը, ապա ՀՀ բանկային օրենսդրության իմացությունը, Հայկական ծրագրերի իմացությունը:



6. Հեռահաղորդակցության ոլորտում ամենապահանջված մասնագիտությունները

Այս ուսումնասիրության նպատակն է ցույց տալ, թե Հեռահաղորդակցության ոլորտում որ մասնագետներն են ամենապահանջվածը:

Միջին աշխատավարձը հեռահաղորդակցության ոլորտում՝ 427.000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այս ոլորտի ընկերությունների սպասարկման մեծ ցանցերը, ամենապահանջված մասնագետները վաճառքի և սպասարկման ոլորտում են: Սա նաև պայմանավորված է այս հաստիքների բարձր հոսունությամբ: Թոփ տասնյակում ներառված են նաև մի շարք SS և ինժեներական մասնագիտական ուղղվածություններ:

7. Ներկրում, արտահանում, առևտուր ոլորտում ամենամեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները

Այս վերլուծության արդյունքները կհետաքրքրի տվյալ ոլորտ մուտք գործել, կամ կարիերայի առաջխաղացում ունենալ ցանկացող անհատներին: Հաշվի առնելով, որ այս ոլորտում են ներառված խոշոր սուպերմարկետները, ապրանքների ներկրմամբ և առևտրով զբաղվող ընկերությունները, ապա զարմանալի չէ, որ ամենից պահանջված են վաճառքի և սպասարկման մասնագետները: Այս ոլորտում բավականին մեծ է առաջարկը նաև հաշվապահների համար: Թոփ հնգյակը եզրափակում են մարքեթինգի և ադմինիստրատիվ ոլորտի մասնագետները:

Միջին աշխատավարձը առևտրի ոլորտում՝ 195.000 ՀՀ դրամ:

8. Ամենապահանջված մասնագիտությունները արտադրության ոլորտում

Արտադրական ոլորտի ընկերություններում ամենաարդի երեք մասնագիտությունները, որոնց պահանջարկն ամենամեծն է հետևյալն են՝ սպասարկում, արտադրություն և հաշվապահություն: Իսկ թոփ տասնյակը եզրափակում է որակի կառավարման մասնագիտությունը:

Միջին աշխատավարձը արտադրության ոլորտում՝ 244.000 ՀՀ դրամ:



ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 2024թ.-ի ՀԱՄԱՐ

1. ԱՄՆ-ում, Կանադայում և Եվրոպայում 2022թ.-ից սկսած SS ճգնաժամը և ՀՀ դրամի արժեզրկմամբ պայմանավորված ՀՀ-ում 2024թ.-ի առաջին կեսին կպահպանվի SS ոլորտի ընկերությունների ցածր ակտիվություն: Սակայն քիչ հավանական է, որ ՀՀ-ում SS ընկերությունները կունենան աշխատակիցների կրճատումներ: Ավելին, 2024թ.-ի երկրորդ կեսին սպասվում է միջազգային SS ոլորտի համեմատական ակտիվություն:

2. Բանկային համակարգը կշարունակի պահպանել աշխատաշուկայի ֆլագմանի դիրքը: Ըստ կանխատեսումների ոլորտում հավաքագրման ծավալները կկայունանան, սակայն եթե ինչպես կանխատեսվում է 2024թ.-ի երկրորդ կեսին SS ոլորտի զգալի ակտիվացում տեղի ունենա, վերջինս կարող է կրկին ապակայունացնել ֆինանսաբանկային ոլորտում հավաքագրման ստատուս քվոն:

3. Սպասարկման, տուրիզմի, հյուրընկալության, արտադրության և նման մի շարք ոլորտների ակտիվությունը անմիջականորեն կապ կունենա արտերկրից և հիմնականում ՌԴ-ից մարդկանց ներհոսքով ՀՀ, ինչպես կարճաժամկետ զբոսաշրջության, այնպես էլ ՀՀ տեղափոխվելու նպատակով:

4. Աշխատավարձերի աճը 2024թ.-ին ավելի շատ կախված կլինի գնաճից: Կանխատեսվում է, որ աշխատավարձերի աճ տեղի կունենա, սակայն աշխատաշուկայում զգալի տեղաշարժեր կամ նոր մեծ խաղացողների մուտք չլինելու դեպքում, աճը զգալի չի լինի:

5. Մարզային ակտիվությունը նույնպես կշարունակվի պահպանվել, քանի որ սկսված գործընթացը ոչ թե տեղային և մեկանգամյա բնույթ ունի, այլ իրական աճ: Աշխատանքներ Գյումրիում և աշխատանքներ Վանաձորում կպահպանեն իրենց թոփ դիրքը:

Հավաքագրեց՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին